ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հունվարի 1-ին, երեքշաբթի, կաղանդ և տարեմուտ։ Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանը «Փողս հարէք ի գլուխս ամսոց, աւուր նշանաւորի տարեկանաց մերոց» բնականով։

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, տեղի ունեցավ հայրապետական մաղթանք։ Ապա նոր Վեհարանի Գահասրահում Վեհափառ Հայրապետը ընդունեց պաշտոնական շնորհավորություններ նոր տարվա առթիվ։

* *
*

Հունվարի 5-ին, շաբաթ, «Ճրագալոյց Ս. Ծննդեան և Աստուածայայտնութեան»։

Մայր Տաճարում, երեկոյան ժամը 4-ին, սուրբ պատարագ մատուցեց գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանը։

Դանիել մարգարեի գիրքը ընթերցեցին Հոգևոր Ճեմարանի սաները։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Հավարտ սուրբ պատարագի, կատարվեց Ս. Ծննդյան տոնի նախատոնակը, ապա Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով, «Խորհուրդ խորին» շարականի երգակցությամբ, առաջնորդվեց նոր Վեհարան։

* *
*

Հունվարի 7-ին, երկուշաբթի, «Ցիշատակ Մեռելոց»։ Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը։

Հավարտ սուրբ պատարագի, հոգեհանգստյան պաշտոն կատարվեց «վասն համօրէն ննջեցելոց» և Մայր Աթոռի հանգուցյալ միաբանների։

* *
*

Հունվարի 13-ին, կիրակի, «Տօն անուանակոչութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։

Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Ներսես վարդապետ Պողոսյանը։ Քարոզի բնաբանն էր «Լոյս ի լուսոյ, ի Հօրէ առաքեցար և մարմնացար ի Սուրբ Կուսէն, զի վերստին նորոգեսցես զապականեալն Ադամ»։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

* *
*

Հունվարի 14-ին, երկուշաբթի, «Տօն Ծնընդեան Սրբոյն Յովհաննու Կարապետին»։ Մայր Տաճարում, ձախակողմյան դասի Ս. Հովհաննու Կարապետի Ս. Սեղանի վրա պատարագեք արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը։

* *
*

Հունվարի 15-ին, երեքշաբթի, Մայր Աթոռի միաբաններ հոգեշնորհ Տ. Արսեն աբեղա Բերբերյանը, հոգեշնորհ Տ. Նարեկ աբեղա Շաքարյանը, ընկերակցությամբ Կարապետ սարկավագ Սարայդարյանի և ուրարակիր Կարապետ Քիլիջյանի, մեկնեցին Հլուսիսային

Կովկաս, հին տոմարով Ս. Ծննդյան տոնակատարություններին մասնակցելու և Բանին կենաց քարոզությամբ մխիթարելու հավատացյալներին Օրջոնիկիձեում, Արմավիրում և Պրիկոմսկում։

Հունվարի 22-ին, երեքշաբթի, Մայր Աթոռի միաբանները վերադարձան իրենց առաքելությունից։

* * *

Հունվարի 20-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը։ Քարոզի բնաբանն էր «Վասն որոյ և Աստուած զնա առաւել բարձրացոյց, որ ի վեր է քան զամենայն անունն»։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

* * *

Հունվարի 22-ին, երեքշաբթի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստը Մայր Աթոռում։

* * *

Հունվարի 26-ին, շաբաթ երեկոյան, Հոգևոր Ճեմարանի հանդիսասրահում, Ճեմարանի հայկական խազագրության դասատու պր. Վարշամ Փարսադանյանը դասախոսեց երջանկահիշատակ Գևորգ Զ Կաթողիկոսի կյանքի և երաժշտական գործունեության մասին։ Դասախոսության ներկա էր Վեհափառ Հայրապետը։

* * *

Հունվարի 27-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։